

արձագանգն այնչափ տկար կ'ըլլայ .  
վասն զի ձայնական շառաւիղներն ալ  
քանի որ իրենց կեդրոնէն հեռանան՝  
այնչափ կը ծաւալին ու կը տկարանան :

Վիլքէր անունով յիսուսեան կրօ-  
նաւորը կ'ըսէ թէ բերդի մը պատուհա-  
նը այնպէս շինած էր՝ որ մէկը դիմացը  
կեցած խօսէր նէ , 40 անգամ ըսած  
բառը կը կրկնուէր : || էրտէօն՝ քա-  
ղաքին մօտ երկու աշտարակ կայ դի-  
մացէ դիմաց շինուած . թէ որ մէկը  
ասոնց մէկուն ստորոտը կեցած՝ բարձր  
ձայնով խօսի , իր խօսածին արձագան-  
գը շատ անգամ կը լսէ . շատ երևելի  
է նաև Արիլանի Արմոնեթթայի ար-  
ձագանգը (որուն վրայ զատ կը խօ-  
սինք) , Անդղիայի մէջ ալ Արդզներինը :

Ձայնին շառաւիղներու ընթաց-  
քին կանոնովը շինուած են նաև ձայ-  
նատար ու ձայնաբեր փողերը . առջի-  
նը հեռու տեղ ձայն հասցընելու կը  
գործածուի , իսկ երկրորդը խուլերը  
կը բանեցընեն՝ ականջներնուն կոթըն-  
ցընելով , որպէս զի ձայնը դիւրաւ  
լսեն . ասոնց երկուքին ալ սկիզբը աս  
է որ ցրուած ձայնական շառաւիղնե-  
րը մէկ կեդրոնի վրայ հաւաքելով՝ ա-  
նոնց ազգեցութիւնը կը զօրացընեն :  
Կը պատմուի թէ հին ատեն Դիոնե-  
սիոս բռնաւորը իրմէ գատապար-  
տուած յանցաւորներուն տրտունջ-  
ներն ու անէծքը լսելու համար՝ որ ի-  
րեն դէմկ'ընէին , բանտին առաստա-  
ղէն դէպ 'ի վեր իր պալատը խխնջա-  
ձե խողովակ մը շինել տուեր էր , որով  
անոնց ամէն խօսածը որոշ կը լսէ ե-  
ղեր : Խինանք ըսել թէ մեր ակընջին  
կաղմութիւնը բոլորովին աս կանոն-  
ներուն համեմատ շինուած է . ակըն-  
ջին գլխաւոր մասունքն են բաւիղը ,  
խխնջաձեը , թմբուկն ու լսողական  
ջղերը , որոնց թրթուալովը՝ ձայնի  
զգացմունքը ինչուան ըղեղնիս կը հաս-  
նի :

1 Աէրտէօն գաղղիոյ Լորէն նահանգին Մէօլ  
գաւառին երևելի քաղաքն է :

Արդուս ներքին ձայնական գոր-  
ծարանը , այսինքն շնչափողը , սրնգի կը  
նմանի . վասն զի թոքին օդն որ ելլէ ,  
կուգայ շնչափողին նեղ ծակէն գուրս  
կ'ուզէ ելլէլ , ան ատենը ձայն կը ձեւա-  
նայ , ինչպէս թէ որ սրնգի մէջ փչելու  
ըլլաս՝ ձայն կը հանէ . շնչափողին ձայն  
հանող ծակը կամլեզուակը որչափ որ  
լայն ըլլայ՝ ձայնն ալ այնչափ հաստ  
կ'ելլէ , որչափ ալ նեղ ըլլայ՝ ձայնն  
ալ բարակ կ'ելլէ . անոր համար է որ  
էրիկ մարդկանց ձայնը աւելի հաստ  
է քան թէ կանանցը . բայց մարդս  
երբոր ուզէ կրնայ ջղերովը իր խռչա-  
փողին ծակը հաստըցընել ու բարակ-  
ցընել , անով այլեւայլ ձայներ հանել :  
Խակ ձայնին արտաքին գործարան-  
ներն են լեզուն , պուկունքը , քիմքը ,  
քթին ծակերն ու ակուաները . ա-  
սոնք այլեւայլ կերպով ծոմըուկելով՝  
շատ մարդիկ տեսակ տեսակ կենդա-  
նեաց ձայներ կը ձեւացընեն . ոմանք  
ալ այնպէս կը խօսին որ կարծես թէ  
ձայնը իրենց փորէն կուգայ , կամթէ  
հեռու ու մօտ եղած մարդկանց ձայ-  
ները ամենաձիշդ կը ձեւացընեն , և  
ասոնք որովայնախօս ալ կ'ըսուին :

Հ . Օ . ԳՈՒՐԳ :

#### ՀԱՆԵԼՈՒԿ

Անծակ մարդարիտ , անոլոր գերձան ,  
Աստուած կուշարէ , մարդըն կուքակէ :

#### ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԱՅՋԻ :

Էջ	Դաշտ	Հիմաւ	Առաջնորդ
292	23	աստեղ	աստեղց
	11	սրբիկ	որբիկ
293	5	յամարտոյն	յամայոյն